ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 հունվարի 2020թ. թիվ 19-Ա

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54-րդ հոդվածի 3-րդ մասով և 219[1] հոդվածով, հիմք ընդունելով «Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտագության տեսչության» կողմից կազմված 08.11.2019թ. թիվ 26 ակտը և Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտագության տեսչական մարմնի ղեկավարի 13.11.2019թ. թիվ N 06-13-19 որոշումը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հողամասը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելը, հողամասերի գործառնական նշանակության և հողատեսքերի ինքնակամ փոփոխությունը չկանխելու համար Լոռի Բերդ համայնքի ղեկավար Արայիկ Ներսիսյանին նշանակել տուգանք սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկի չափով:

2. Տուգանքը անձնական միջոցներից 15-օրյա ժամկետում վճարել ՀՀ ՔՏՀԱՏՄ 900005001517 հաշվեհամարին:

3. Տուգանքը սահմանված ժամկետում չվճարելու դեպքում այն կիրականացվի օրենքով սահմանված կարգով:

4. Լոռի Բերդ համայնքի ղեկավար Արայիկ Ներսիսյանին՝

Մեկամսյա ժամկետում վերացնել «Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտագության տեսչության» կողմից կազմված 08.11.2019թ. թիվ 26 ակտում նշված խախտումները և արդյունքների մասին ներկայացնել տեղեկատվություն Լոռու մարզպետարան:

5. Մարզպետարանի քարտուղարության պետ Ս.Մակարյանին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի համաձայն սույն վարչական ակտը եռօրյա ժամկետում հանձնել Լոռի Բերդ համայնքի ղեկավար Արայիկ Ներսիսյանին պատվիրված փոստով՝ ստանալու մասին ծանուցմամբ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2020թ. հունվարի 13
ք.Վանաձոր